«Ս. Թադէոս և ս. Բարդուղիմէոս առաքելոց վանքերը։» Հանդէսը փակեց Ճեմարանի Հ. Տեսուչը մի համառօտ բանախօսութեամբ։

ՏԱՃԿԱՀԱՅՔ.

† Տ. Խորէն արքեպիսկոպոս Աշրդեան Նախկին պատրիարք Կ. Պոլսոյ վախճանեցաւ քաղցկեղէ՝ 57 տարեկան հասակին մէջ, հոկտեմբերի 26-ին։

Տ. Խորէն Արքեպ. ծնած էր 1842 ին Նալովայի Քերէմէթ գիւղին մէջ, Նիկիոյ Ը՛ին եղբերքը. իւր աշխարհական անունն էր Սերովբէ. ինը տարեկան հասակին մէջ մտած է Արմաշու ս. Աստուածածնայ վանքը. 1863 -ին ձեռնադրուած է վարդապետ և 1873-ին եպիսկոպոս Տ. Գէորգ Մեծադոյն կաթուղիկոսէն։ Երկար ժամանակ եղաւ վանահայր Արմաշի վանքին, ուր ինքն հիմնեց նաև «Յոյս» ամսաթերթը։ 1888 սեպտ. 29-ին, Տ. Խորէն Սրբազան ընտրուեցաւ Պոլսոյ պատրիարք և այդ պաշտօնը շարունակեց մինչև 1894 յունիս 15։ Տ. Խորէն Սրբազան բացի «Յոյս»էն ունեցած է բազմաթիւ աստուածաբանական թարգմանութիւններ և ինքնագիր յօդուածներ՝ հրատարակուած այլեւայլ թերթերու մէջ՝ «Ասողիկ» և «Սանդիանէ» կեղծանուններով։

Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ հինգշաբթի օր՝ Բերայի ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ. պատարագիչ Ամեն. Ս. պատրիարքը և դամբանականը խօսեցաւ վերարերումն վերջ. ներկայ էին մայրաքաղաքին բոլոր եպիսկոպոսները, աշխարհականներէն բազմաթիւ ականաւոր անձինք, բողոքականաց ազգապետը, Ռուսական դեսպանատունէն ներկայացուցիչ մը, նմանապէս հայ-հռոմէականներէն պատուաւոր ազգայիններ և յոյն վաճառականներ։

Ս. Օծումը կատարուեցաւ քարոզէն վերջ. հանգուցելոյն մարմինը մեծ հանդիսով փոխադրուեցաւ Շիշլիի գերեզմանատունը և թաղուեցաւ Տ. Խորէն Նար-Պէյ և Տ. Գ. Սրուանձտեանց եպիսկոպոսներուն քով։

— Ամեն. Ս. Պատրիարքն հոկտ. 8-ին Կայսպալատ գնաց և տեսակցելով Ա. քարտուղար Թահսին պէյի հետ, իր շնորհակալութիւնն յայտնեց վեհ. Սուլթանին բարեհաճ իրատէներուն համար։ Ա. Քարտուղար Պէյը ս. պատրիարքին զգացումները մատոյց վեհ. Սուլթանին, որ բարեհաճեցաւ Իր բարձր գոհունակութիւնն յայտնել և Իր բարեները հաղորդել Ն. Ամենապատուութեան, գնահատելով անոր պաշտօնավարութիւնն և մատուցած ծառայութիւնները։ Ն. Վեհափառութիւն հաւատաց թէ ամէն դիւրութիւն պիտի շնորհուի Ն. Սրբազնութեան, Վարչային գործերուն բարւոք ուղղութեան համար։

Ն. Ամենապատուութեան ծանուցուեցաւ Կ. իրատէ մը որ կը պատուիրէ Դատական գործոց Նախարարութեան որ Պիլիկիոյ կաթուղիկոսին ընտրական գործողութիւնները փութացնեն և հետևապէս Խառն ժողովին կողմէ պատուիրակ կարգուած Տ. Սահակ եպս. Խապայեանի պաշտօնն հաստատող հրամանագիրը տրուի և ճամբայ հանուի կրօն. Տեսչութեան կողմէ որոշուած Պէհա Պէյ որ Ատանայի կամ Սսոյ մէջ կաթուղիկոսական ընտրութեան գործողութեանց ներկայ պիտի գտնուի ի դիմաց կայսեր. կառավարութեան։

Հինցած և խարխլած եկեղեցիներուն նորոգութեանց համար պնակներ շրջագայելու մասին կարգադրութիւն լինելով, Ազգ. պատրիարքարանէն գրուած է պատկանելոյ Առաջնորդարանաց՝ նոյն վիճակին մէջ գտնուող և պէտք ունեցող եկեղեցիներուն նորոգութեան մասին։

Նոյն օրը Ս. պատրիարքը նաև այցելեց դատական, կրօնական նախարարները, կրօնային գործոց վերատեսուչը, Մեծ. Եպարքոսը, ներքին և արտաքին գործոց նախարարները, պետական խորհրդոյ նախագահը և ներքին գործոց նախարարութեան խորհրդականը։ Այս երկարատև այցելութիւններէ ետք պատրիարքարան երթալով ստանձնեց իւր պաշտօնը։

Ս. Պատրիարքը կիրակի օրը յատկապէս քարոզեց Մայր եկեղեցւոյ մէջ Հայ ժողովրդեան ծանուցանելու համար շնորհեալ կայսերական իրատէները. մեծ բազմութիւն խառնուած էր եկեղեցւոյ մէջ, հեռաւոր թաղերէն բազմաթիւ ունկնդիրներ լցուած էին. Ս. Պատրիարքին բնաբանն էր Պօղոս առաքեալի «մի գուցէ ընդունայն ինչ ընթացցեալ իցեմ կամ ընթանայցեմ» խօսքը. խօսեցաւ շատ եռանդուն կերպով, ոգևորեալ շեշտերով և պահ մը նաև յուզուած, սովորականէն աւելի շարժելով իր ունկնդիրները։ Ն. Ամենապատուութիւն բացատրեց այն բազմագիմի դժուարութիւնները որոնք պահ մը զինքը մեկուսացուցին, բայց նաև իր հաստատակամութիւնը, որով չուզեր գործէ խուսափիլ։ Ուստի ինքը գիմեց Ն. Կ. Վեհափա-

ռութեան մատուցանելով իր ժողովրդին խնդրուածքը և ահա ուրախութեամբ կուգայ աւետել թէ Ն. Վեհափառութիւն հաճեցաւ ի նկատ առնուլ զանոնք և զանազան իրատէնէր շնորհել։

ա.— Հայ ճամբորդներուն երթևեկութեան դիւրութիւններ շնորհուին ոչ միայն Թուրքիոյ, այլ և արտասահմանի Օսմ. հպատակ հայերուն և ամէն հայ անարգել կարենայ երթևեկել ուրիշ հըպատակներու նման։

բ.—Ներում շնորհուեցաւ Վանի և Պաշգալէի 39, Արաբկերի 10, Սեբաստիայի 1 և Տրապիզոնի 1 հայ բանտարկեալներու։ Բարձրագոյն շնորհ յուսալի է միշտ ուրիշ բանտարկեալներու, որոնք ինչ ինչ անխոհեմութեանց և անզգուշութեանց բերմամբ և կարճամտութեամբ օրէնքի խլստութեան ենթակայ եղան երբեմն։

գ.— Արտօնութիւն շնորհուեցաւ նորոգելու հինցած խարխլած եկեղեցիներ, վանքեր ու դպրոցներ. ժողովուրդը կարող է մասնակցիլ այդ նորոգութեանց համար բացուած հանգանակութեանց։

դ.— Գաւառները տարագրուած հայերուն առնելիքն ու գոյքն իրենց պիտի հատուցուի. Կայսերական Անձնական գանձուն, Թղթանոթարանի, Սպարապետութեան և ծովային պաշտօնարաններուն մէջ երբեմն աշխատած հայ պաշտօնեայք, արհեստաւորք և թշուառ հայ բանուորք պիտի կրնան այսուհետև իրենց առնելիքները ստանալ։

ե.— Ազգ. պատրիարքարանին արտօնութիւն շնորհուած է ըստ Գարակէօղեան կտակի որբանոցի մը շինութեան, իբրև յարակից հէնք ս. Փրկչի Ազգ. հիւանդանոցին։

Յետոյ Ն. Սրբազնութիւն յորդորեց ժողովուրդը՝ որ այդպիսի շնորհներ վայելելով հանդերձ, իր խոհականութեամբը զգոյշ կենայ դժուարութիւններ հանող հանգամանքներէ։ Կոչում ըրաւ նաև ժողովրդեան նիւթական օժանդակութեան բազմաթիւ սովատանջ հայ գաւառներուն օգնութեան ձեռն կարկառելու համար։

— Արաբկիրի առաջնորդ Տ. Մուշեղ վրդ.-ի Առաջնորդական հրամանագիրը Բ. Դռնէն յանձնուած է Ազգ. պատրիարքարանին։

— Բաղէշի գաւառական ընդհ. ժողովը քուէից բացարձակ առաւելութեամբ առաջնորդ ընտրեց Տ. Եղիշէ վրդ. Զիլինկիրեան։

— Նպատից յանձնաժողովը 200 ոսկի արժողութեամբ գրքեր ուղարկեց Կարնոյ, Առանայի, Սեբաստիոյ և Արաբկերի կարօտ հայ վարժարաններուն։ Նմանապէս 250 ոսկի Վան, 100 ոսկի Բաղէշ և 30 ոսկի Երզնկա ուղարկեց յառաջիկայ ցանքի ցորենը գնելու համար։

— Պատրիարքարանի տնօրինութեամբ նոր որբանոց մը կը բացուի Խիզանի մէջ Աղթամարի աթոռի տեղապահ Տ. Արսէն վրդ.-ի հսկողութեան տակ։

— Եզրաս վրդ. Սազլեան ընտրուեցաւ Բաղէշի առաջն. տեղապահի օգնական և 18 հոկ.-ին մեկնեցաւ իր պաշտօնատեղին։

— Ամերիկայի Հուսայթընսվիլ և Փրովիտէնս քաղաքներու հայ բողոքականաց քարոզիչ պր. Մարգուկէսեան վերադառնալով իր մայրենի ս. եկեղեցւոյ ծոցը վարդապետ ձեռնադրուած է Ուսդրը քաղաքի ս. Փրկիչ եկեղեցւոյն մէջ՝ Ամերիկայի հայոց հոգևոր հովիւ Տ. Յովսէփ եպս. Սարաճեանէն՝ Վարագայ ս. Խաչի տօնի օրը։ Հանդէսը շատ սրտաշարժ եղած է. ներկայ էին բացի Ուսդրբի հայ ազգաբնակութենէն, Նանիլ-Եօրքի հոգևոր հովիւ Խադ վարդապետ, Պոսթոնի հոգևոր հովիւ Տ. Մաշտոց վ. Փափազեան, Փրովիտէնսի Տ. Գասպար քահանան և հազարի մօտ ուրիշ հիւրեր։ Նիւհէյվըն քաղաքէն պր. Փառնակ Ադամեան, աշակերտ Եէյլի աստուածաբանական համալսարանին, նոյն օրը ձեռնադրուած է դպիր։

Պր. Մարգուկէսեանի վերադարձը ընդհանուր ուշադրութիւն գրաւած ըլլալով, Նիւ-Եօրքի բողոքական միսիոնարութեան պաշտօնատունը բացատրութիւն պահանջած է պր. Մարգուկէսեանէն։ Ինքը պատասխանած է. «Իմ հայրս և մայրս հայ եկեղեցւոյ զաւակ եղած են. ուրեմն ես ալ հայոց եկեղեցւոյն կը պատկանիմ. հայ գաւանութիւնն ընդունելով ես ոչ թէ կրօնափոխ եղած եմ, այլ իմ մօրս գիրկը կը դառնամ։»

— Հոկտ. 17-ին կիրակի օրը Զմիւռնիոյ մէջ հանդիսաւոր կերպով տօնուեցաւ պր. Մատթէոս Մամուրեանի գրական և ուսուցչական գործունէութեան յիսնամեայ յոբելեանը. բազմաթիւ ատենախօսութիւններ եղան. Առաջնորդ Տ. Մելքիսեդեկ սրբազան պերճախօս ատենաբանութեամբ մը շնորհեց նոյն հանդէսին բարոյական մեծ նշանակութիւնը։ Ամէն կողմէ քաջուած հեռագրներուն ու նամակներուն վերջը չի գար. դրամական նուէրներուն գումարը 300 ոսկի (2700 ռուբլ) կը հասնի, բացի արժէքաւոր առարկաներէն, որոնք կարևոր թիւ մը կը կազմեն։

— Երուսաղէմի Ամեն. Տ. Յարութիւն ս. Պատրիարք հայրը իջած է Յոպպէ՝ ուր եթէ հանգամանքները ներեն՝ պիտի մնայ մինչև նոյեմբերի վերջը. Ն. Սրբազնութիւնը կը բնակի Յոպպէի ծովեզրեայ վանքը զոր այս անգամ խիստ ճաշակաւոր կերպով նորոգել տուաւ Տ. Ղևոնդ վրդ. Մաքսուտեան։ Եկեղեցիէն տեսուչ ս. Յակոբեանց միաբանութեան։